

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <a href="mailto:info@westernprelacy.org">info@westernprelacy.org</a> Website: <a href="mailto:www.westernprelacy.org">www.westernprelacy.org</a>



<u>ՎԵ</u>ՅԱՓԱՌ ՅԱՅՐԱՊԵՏԸ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ <u>ՅԵՏ</u>

## ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՐԴԱԿԵՐՏ ԱՌԱՔԵԼՈ**Ի**ԹԻԻՆԸ ՊԷՏՔ Է ՏԱՆԻԼ ԺՈՂՈՎՈԻՐԴԻՆ

ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Դպրեվանքի Սանուց Միութեան Վարչութիւնը, գլխաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ բարձը. Մուշեղ Unp. Մարտիրոսեանի, Երկուշաբթի, **Յոկտեմբերի լետ միջօրէին** հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Վեհափառ **Յալրապետին** հետ։ Յանդիպումը առիթ շահեկան եղաւ gnnigh: Յիշենք որ Դպրեվանքի Սաևուց Միութիւևր, Սրբոց Թարգմանչաց տօնին

նախօրէին, ի պատիւ Վեհափառ Յայրապետին, կազմակերպած էր ճաշկերոյթի երեկոյ մը, Փասատինայի Յայ Կեդրոնին մէջ եւ Դպրեվանքին ապահոված շուրջ 350 հացար տոլարի նուիրատուութիւն։

Վեհափառ Յայրապետը գնահատեց Առաջնորդ Սրբազան Յօր նախաձեռնութեամբ ծնունդ առած Դպրեվանքի Սանուց Միութեան եւ անդամներուն տարած աշխատանքը՝ Արեւմտեան Թեմեն ներս. յիշեցնելով, որ Միութեան գործունեութիւնը պետք է արտացոլացումը ըլլայ Դպրեվանքի մարդակերտումի եւ հայակերտումի առաքելութեան, Դպրեվանքը ծանօթացուի մեր ժողովուրդի զաւակներուն։ Այս ծիրեն ներս, Վեհափառը թելադրեց, որ Միութիւնը, դաստիարակչական թէ ընկերային բնոյթի ժողովորային եւ անդամական հաւաքներ ու երեկոյթներ կազմակերպէ։

«Դպրեվանքը, ըսաւ Վեհափառը, պէտք է տանիլ մեր ժողովուրդին, եւ տեղեկացնել որ Դպրեվանքը միայն կուսակրօն եկեղեցականներ եւ ամուսնացեալ քահանաներ չի՛ պատրաստեր, ուսուցիչներ, դպրապետներ, մտաւորականներ եւ ազգային մեր կեանքին նուիրեալ ու գիտակից հայեր»։

Յանդիպման ընթացքին, տեղի ունեցաւ մտքերու փոխանակում եւ Դպրեվանքի առօրեային մասին տեղեկութիւններ փոխանցուեցան։ Առաջարկուեցաւ Դպրեվանքի ուսումնական ծրագրին, ինչպես նաեւ առաքելութեան եւ ներքին աշխատանքներուն շուրջ գործնական միջոցներ որդեգրել, որպեսզի մեր ժողովուրդի զաւակները տեղեկանան եւ ծանօթանան Դպրեվանքի մարդակերտումի եզակի առաքելութեան եւ ժողովրդային շինիչ ծառայութեան։

Յաճելի հանդիպումը Վեհափառ Յօր հետ աւարտեցաւ յիշատակի հաւաքական լուսանկարով։

## HIS HOLINESS CATHOLICOS ARAM I MEETS WITH SEMINARY ALUMNI COMMITTEE MEMBERS

On Monday, October 24, 2011, His Holiness Catholicos Aram I met with members of the Catholicosate Seminary Alumni Committee. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, joined His Holiness at the meeting.

On the Feast of the Holy Translators which was celebrated two weeks prior, the Seminary Alumni Committee had organized a banquet in honor of His Holiness and dedicated to the Seminary, which brought in \$350,000 for the Seminary.

His Holiness commended the Committee, which was established by the initiative of the Prelate, and noted that the work of the Committee should be a reflection of the mission of the Seminary and should more closely familiarize our faithful with the Seminary. To further this endeavor, His Holiness suggested that the Committee organize educational, social, and community events between alumni and also for the community. "We must take the Seminary to the people and let them know that the Seminary does not only prepare clergymen, it educates teachers, intellectuals, and community leaders".

A discussion followed during which information and ideas were exchanged. Means were discussed of informing the public of the educational curriculum and endeavors of the Seminary, so that they our people is well aware of the invaluable mission of the Seminary.